ՊԱՏՄԱԲԱՆԱԿԱՆ

ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԱՐՏԱՇԱՏԻ ԱՊՈԼՈՆ-ՏԻՐԻ ՏԱՃԱՐԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Արտաշատի հնագիտական արշավախումբը 2007-2008 թթ. հունիս-հուլիս, հոկտեմբեր ամիսներին շարունակել է աշխատանքները քաղաքի հարավարեւմտյան մասում՝ Արաքսից մոտ 70 մ հեռու գտնվող բլրակի հարեւանությամբ՝ երկրորդ հարթակի (Iդ. երկրորդ կես) հարավարեւելյան հատվածում՝ 2006 թ. բացված հասարակական բաղնիքի երեք սենյակներին կից տարածքում: Հարթակի արեւելյան պատը 36.3 մ հեռո թեքվեց դեպի արեւմուտք (7.8 մ): Պահպանվել է միայն պատի սեւ մարմարի խոշոր զանգվածներով երկու շարքը: Հարավարեւելյան եւ հարավարեւմտյան կողմում 2007 թ. պեղվել է եւս երեք սենյակ* (№ 4-6, նկ.1): Այստեղ նույնպես նախորդ սենյակների նման առկա է չորս շինարարական շրջան (II դ. վերջ-III դ. սկիզբ, IV դ. սկիզբ, V-VII դդ. եւ VIII- XVI դդ.): IV սենյակի (5.8 x 3.6 մ) յուրաքանչյուր պատի վրա կա դռան մեկական բացվածք, որոնցից առաջինը հաղորդակցվել է II եւ VI սենյակների միջեւ գտնվող միջանցքի հետ, երկրորդը՝ արեւելյան կողմի VIII սենյակի, իսկ երրորդը՝ արեւմտյան V սենյակի հետ: V սենյակը (7.7x3.7 մ) հյուսիսային, հարավային եւ արեւմտյան պատերին ունի դռան մեկական բացվածք: VI սենյակը չափերով համեմատաբար փոքր է (4.4x3.75մ), ունի դռան երկու բացվածք՝ մեկը հարավարեւմտյան անկյունում գտնվող նեղ ու երկար միջանցքի հետ (երկ. 5,1, լայն. 90x105 սմ), որը միանում է V սենյակին եւ արեւմտյան կողմում՝ դեռեւս չբացված սենյակին, մյուսը՝ VII սենյակի պատին (լայն. 80 սմ), VII սենյակը (6.4 x 1 մ) երեք դռան բացվածք ունի, մեկը՝ արեւելյան VI սենյակի հետ կապող, մյուսը՝ V սենյակի, իսկ երրորդը՝ արեւելյան միջանցքի պատին (լայն. 90 սմ):

Համալիրի բացված հատվածի պատերի պահպանված բարձրությունը ներքին (առաջին) հատակից 2.5 - 4.35 մ է, լայն. 80-90 սմ (նկ. 2, 3): Շինանյութը ճեղքված որձաքարն է, թրծած աղյուսը, որոշ պատերի մեջ կան գետաքարեր՝ շարված կրաշաղախի օգնությամբ: Սենյակների անկյունները եւ դռների բացվածքների երիզները շարված են լավ մշակված եւ հղկված կրաքարե խոշոր զանգվածներով: Ըստ պատերի մակերեսին պահպանված սվաղների՝ դրանք բաղկացած են կրաշաղախե ծեփի երկու շերտից, առաջինը՝ 2-2.5 սմ հաստությամբ սպիտակ ավազախառնուրդով եւ երկրորդը՝ 0.5 սմ հաստությամբ նուրբ կրաշաղախով:

Բոլոր սենյակներն ունեն կրկնակի հատակ, այսինքն տաքացվել են: Ջեռուցումն իրականացվել է, այսպես կոչված, հիպոկաուստի (hipocaustum), սյուների վրա կառուցված կրկնակի հատակի եւ պատերի միջոցով (նկ. 2-3): Չորս անկյունում կոնաձեւ ելուստներ ու-

* Չափագրությունները կատարել է արշավախմբի ճարտարապետ Ա. Գ. Կանեցյանը:

նեցող (6-10 սմ) քառանկյուն աղյուսները ծայրերով ամրացվել են պատերին եւ ծածկվել սվաղով: Այս եղանակով ստացել են դատարկ տարածություն: Վառարանի տաք ծուխը պատերի ներքնամասում թողնված կամարակապ բացվածքների միջով թափանցել է հատակի եւ պատերի միջեւ եղած դատարկ տարածություն եւ տաքացրել տարածքը: Նման ելուստներով աղյուսներ հայտնաբերվել են Արտաշատի VIII բլրի բաղնիքից (II դ.), Գառնիի բաղնիքից (II դ.)[1], Վրաստանի անտիկ բաղնիքներից[2]: Քառակուսի, կոնաձեւ եւ ուղիղ ելուստներով աղյուսներ նույն նպատակով օգտագործվել են հռոմեական բաղնիքներում:[3] Այդ ձեւով տաքացվող սենյակների օդը ավելի հաճելի եւ առողջարար էր[4]:

Սենյակների ստորին հատակները պատրաստված են անջրաթափանց, բետոնե կարծր շաղախով: Այսինքն, դրանով այն տարբերվում է Հայաստանի՝ մեզ հայտնի բաղնիքների (Գառնիի, Վաղարշապատի, Արտաշատի VIII բլրի) ստորին հատակներից, որոնք տոփանված կավից էին: Ստորին հատակին դրվել է 20-22 սմ լայնությամբ, 4 սմ հաստությամբ թրծած կավե քառակուսի աղյուս, որի վրա կրաշաղախի օգնությամբ շարվել է նույն տրամագծի եւ հաստության սկավառակաձեւ 13 աղյուս (բարձր. 76 սմ), վերին մասում կրկին դրվել է քառակուսի մի աղյուս: Սյուներին կրաշաղախ քսելուց հետո, դրանց միմյանցից ունեցած հեռավորության համաձայն, շարել են (երկ. 62-65, լայն. 41-42 սմ) հաստ (7-8 սմ) աղյուսներ, յուրաքանչյուր սյան վրա հենվել է նման չորս աղյուսի անկյուն, ապա ծածկվել է 2-3 սմ շաղախի շերտով եւ շարվել փոքր չափերի ու ավելի բարձր (50x50x4-5 սմ) աղյուսներ եւ այդ ամենը ծածկվել է կրի ավազի ու մանրած աղյուսի կամ կղմինդրի խառնուրդից պատրաստված 5-7 սմ հաստության շաղախի շերտով: Ստորին եւ վերին հատակի բարձրությունը 1 մ է: Եվ ստորին, եւ՛ վերին հատակի մակերեսը բաց վարդագույն է: Ըստ պահպանված հենասյուների՝ այդպիսին է առաջին՝ մեծ սենյակի (մոտ 75 քմ) հիպոկաուստի կառուցվածքը[5]: Նույնատիպ հենասյուներ ունեն II, III, V-VII սենյակները, իսկ IV սենյակի սյուները քառակուսի աղյուսներից են բաղկացած:

IV սենյակի հատակը հարդարված է խճանկարով, պահպանվել է հարավային կեսը (նկ. 4): Այն նման է II սենյակի խճանկարին: Պատրաստված է ֆիլզիտ քարի հատիկներով (0.7-1,2 սմ): Ընդհանուր ֆոնը սպիտակն է՝ վերցված սեւ սմալտայով (գունախճիկ) պատած հատիկներից կազմված ուղղանկյուն շրջանակի մեջ (ժապ. լայն. 8 սմ):

Հարավային պատին կից՝ ուղղակի խճանկարի վրա, թրծած խոշոր (41x65 սմ, 50x50 սմ) աղյուսներով, բետոնե շաղախով պատրաստված է ուղղանկյուն ավազան (լոգան, 80x212 սմ, պատերի լայն. 50 սմ, նկ. 4): Հավանաբար այն ծառայել է տաք ջրով լողանալու եւ լոգանք ընդունելու համար: Բաղնիքներին բնորոշ էին նաեւ առանձին հատվածներում անհա-

1 Տե՛ս **Ժ. Խաչատրյան**, Նորահայտ մոնումենտալ շինություններ Արտաշատից, «Էջմիածին», հունվար, 2007, էջ 35:

2 **Ал. Бохочадзе**. Настакиси, Саркине, Дзалиси-города Иберии античной эпохи.- "Краткие сообщения", М., 1977, 151, с.97; М. Дзнеладзе, Изучения керамических строительных материалов древней Грузии."Археология, этнология, фольклористика Кавказа", Тбилиси, 2004, с.65, рис. 11,12.

3 **Josef Durm**. Die Baustile historische und technische Entickelung des handbuches der architektur. Band 2, Stuttgart, 1905, fig 194.

4 **Огюст Шуази**.История Архитектуры.М., 1935, Т.I, с.477.

5 **Ժորես Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 36-37:

տական լոգանների տեղադրումը: Տաք ջրի լոգանքներ ընդունելն առողջարար էր, հանգստացնող: Վերոհիշյալը նման լոգաններից մեկն է: Ուշագրավ է, որ Գառնիի արքայական բաղնիքի ամենամեծ, տաք լողասենյակի (IV) հյուսիսարեւմտյան անկյունում պահպանվել է 14 սմ բարձրության կրաշաղախե հարթակ (2.4x2 մ), որի նշանակությունը պարզված չէ[6]: Բ. Ն. Առաքելյանը ենթադրում է, որ այստեղ տեղադրված է եղել ջրամբարը: Ամրոցի հրապարակում, բաղնիքում եւ պալատական համալիրում հետագա սրուգողական աշխատանքների ընթացքում հայտնաբերվեցին տարբեր չափերի ու ձեւերի մարմարի բեկորներ: Արքունի բաղնիքը չէր կարող չունենալ բաղնիքի կարեւոր բաղադրամասերից մեկը, որը, բնականաբար, պետք է լիներ մարմարից[7]: Այն գտվում էր կրակարանի հարեւանությամբ եւ ծառայել է տաք ջրով լոգանք ընդունելու համար:

IV սենյակի հյուսիսային մասում, որտեղ խճանկարը չէր պահպանվել, բացվեցին քառանկյուն աղյուսներով շարված հիպոկառուստի սյուներ: Խճանկարով հատվածը հարավից դեպի հյուսիս 5 սմ թեքություն ունի, մինչեւ դիմացի պատը այն կկազմեր 10 սմ (երկրորդ հատակի բարձր. 1 մ է): Այս սենյակի հարավային պատի հետեւում բացվեց քառանկյուն կրակարան (լայն. 109 սմ, խոր. 120 սմ), որն ունի ներքեւ տանող երկու ատիճան: Պատի ներքեւում կամարաձեւ անցքն է (բարձր. 60 սմ, լայն. 50 սմ): Այն մեկ անգամ եւս վկայում է, որ յուրաքանչյուր սենյակ ունի առանձին կրակարան:

V սենյակի արեւելյան պատին կիսակլոր խորշ է պատրաստված (լայն.165սմ, խոր. 90), որի պատերը թրծած աղյուսներով են շարված (50x50x5 սմ): Հատակը եւ պատերը սվաղված են անջրաթափանց շաղախով (նկ. 4,5): Խորշի հատակը արեւմտյան ցածր պատին կից՝ կենտրոնում, ջրահեռացման համար ծագարաձեւ անցք ունի: Այն, հավանաբար, ծառայել է սառը ջրով լողանալու համար: Խորշի առջեւով անցնում է աղյուսներով պատրաստված առվակ (լայն. 18 սմ, խոր.18 սմ), որը սկիզբ է առնում սենյակի հյուսիսարեւելյան դռան բացվածքից, որտեղ այն լայնանում է (60x50 սմ), ու իր մեջ ընդունելով II եւ IV սենյակներից եկող ջրերը՝ գնում է դեպի հարավարեւելյան պատը՝ միախառնվելով հարավ արեւելքից եկող առվակին, հոսում է դուրս: Այս սենյակը նույնպես տաքացվել է: Երկրորդ հատակը հենվել է սկավառակաձեւ աղյուսներով պատրաստված սյուների վրա: Հատակի վրայից հայտնաբերվել են մեծ քանակությամբ խճանկարի հատիկներ եւ խճանկարով հատակի բեկորներ:

Հյուսիսարեւելյան դռան շեմի (լայն. 60սմ) IVդ. վերաբերող շարվածքը հեռացնելուց հետո բացվեց II դ. վերջի III դ. առաջին քառորդին պատկանող մուտքը, որն ավելի լայն է (1,05 սմ), պահպանվել է նախորդ շերտի խճանկարը: Այն նույնպես պատրաստված է ֆիլզիտից, ուղղանկյուն սեւ շրջանակի մեջ (լայն. 57սմ) սպիտակ ֆոնի վրա սեւ ժապավենով շեղակյունի է պատկերված, որի կենտրոնում սեւով ավելի փոքր շեղանկյունի է, իսկ սուր եզրերի կողքերին՝ սեւով ուղղանկյուն եռանկյուններ (նկ. 5,7): Նման երկրաչափական զարդերով

6 **Г. А. Тирацян**. Памятники коммунальной техники древней Армении-баня в крепости Гарни.-"Историко-филологический журнал" (ИФЖ), 1959, № 2-3, с. 271; **Б. Н. Аракелян**. II. Результаты раскопок 1951-1955гг., Ереван, 1957, с. 23; **Ա. Ա. Սահինյան**, Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը, Երեւան, 1983, էջ 56; **Б. Н. Аракелян**. Мозаика из Гарни.- Вестник древней истории (ВДИ), 1956, 1, с.145, **Ж. Д. Хачатрян**, **А. В. Тоникян**. Античная баня в Гарни.- ВДИ, М., 1986, 3, с.144.

7 Там же, с.145, рис.3.

խճանկար բացվել է Փոքր Ասիայի հարավարեւելյան հատվածում, Կիլիկիայի Անեմուրիում աղաքի մեծ բաղնիքի սառը ջրով լողանալու (frigidarium) սենյակի մուտքի շեմին, որը ի տարբերություն Արտաշատի խճանկարի, այնտեղ շեղանկյուն եւ ուղղանկյուն

զարդերն արված են մուգ կապույտ ֆոնի վրա սպիտակով: Այն թվագրվում III դ. երրորդ քառորդով[8]:

V սենյակի ասֆիճանաձեւ նեղացող արեւմտյան պատին (լայն. 350սմ) կողք կողքի, թրծած աղյուսներով պատրաստված կամարաձեւ երկու խորշ կա: Հարավային խորշը ավելի մեծ է եւ կիսակլոր խորություն ունի (բարձր. 150 սմ, լայն. 85 սմ, խոր. 45 սմ): Այն կրաշաղախով գեղեցիկ մշակված անկյուններով է սվաղված: Հյուսիսայինը ավելի փոքր է, ոչ խորը, հարթ հեստնամասով եւ գրեթե առաջինի կես բարձրությունն ունի (բարձր. 105 սմ. լայն. 60, խոր. 32 սմ, նկ. 6,8, 9):

Հարավարեւելյան դռան բացվածքի եզրին՝ 50 սմ բարձրության հողի վրա (ոչ իր տեղում), հայտնաբերվել է կրաքար (բարձր. 50 սմ, լայն. 50x50 սմ), մի կողմում գլանաձեւ երկու անցքով (տրամ. 14 սմ), որոնց մեջ պահպանվել է կավե խողովակի 10 սմ հատվածը: Այն երկու կողքերին կենտրոնում ունի նույն տրամագծի մեկական գլանաձեւ անցք, երրորդ կողմում առկա է չորս գլանաձեւ անցք (տրամ. 14 սմ): Բոլոր կողմերի անցքերը մեջտեղում միացած են իրար (աղ. I, 1): Նման չորս անցքով կրաքար հայտնաբերվել էր II սենյակում, որի լայն. 50x50 սմ էր, բարձր. 75 սմ: Սակայն այդ անցքերը միմյանց զուգահեռ էին: II սենյակում գտնվել էին նաեւ նման անցքերով կրաքարերի մի շարք բեկորներ[9]: Ամբողջական քարի մի երեսը սվաղված էր, այսինքն եղել է երկրորդ հատակի վրա: Նման ամբողջական երրորդ քարը բացվել է VI սենյակի կրակարանի հարեւանությամբ, նեղ ու երկար միջանցքի ծայրին: Այն վերին մասում ունի երեք անցք: Ուշագրավ է հարավարեւմտյան կողմին կցված քառանկյուն փոքր կրաքարը, որը մի կողմում եղած գլանաձեւ լայն անցքով միացած է վերոհիշյալ քարի անցքին, իսկ վերին մասում ունի քառանկյուն փոքրիկ անցք (լայն. 17x19 սմ, բարձր. 4.5 սմ, փոքր անցքի տրամ. 2.3 սմ), որի վրա, հավանաբար, միացվել է ջրի մեծաղյա խողովակը (աղ.II, 1):

V-VI սենյակները միացնող դռան բացվածքի շեմին տեղադրված է կրաքարե ամբողջական լավ հղկած սալ, որի արեւմտյան եզրին թեք կտրված անցք է թողնված: Այստեղից սկսվող կավե փոքր տրամագծի խողովակաշարը (խողովակի տրամ. 7x13 սմ, երկ. 38 սմ), պտույտ տալով VII սենյակի արեւմտյան դռան բացվածքով, կրաքարե ջրբաժանով, որը վերին մասում գլանձեւ անցք ունի, երկու մասի է բաժանվում, մեկը թեքվում է դեպի հարավ, մյուսը բեստոնե ցածր պատի (բարձր. 48 սմ, լայն. 24 սմ, փայտե սյուների համար արված գլանաձեւ անցքերի տրամ. 15 սմ է երկու անցքերի միջեւ եղած հեռավորությունը 85 սմ) միջով անցնելով գնում է դեպի հյուսիս արեւմուտք (նկ. 10), (աղ. II, 2):

2008 թ. բացվել է երկրորդ կավե խողովակաշարը IX սենյակի հարավային պատի դրսի կողմից (3.8 մ), հարավարեւելյան անկյունից պտտվելով արեւելյան պատի երկայնքով գնում միանում է III սենյակի արեւելյան պատին կպած քառակուսի կրաքարի հարավային կողմի

8 **James Rassell**, Mosaic inscriptions from the Palaestra at Anemurium - "Anatolian studies", vol. XXIV, 1974, p. 98-102, Fig. 4.

9 **Ժ. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 35-36:

անցքին եւ դուրս գալով վերին մասի գլանաձեւ անցքով միանում է արեւելյան պատի մեջ տեղադրված կավե խողովակին: Հետաքրքիրն այն է, որ այս խողովակաշարի անկյունային խողովակի վրա եւ նախքան III սենյակի քարի անցքին միանալը ձվաձեւ անցքեր են բացված

(աղ. II, 3):

Ի դեպ գլանաձեւ երեք անցքով կրաքարեր հայտնի են Անտիոքում բացված բաղնիքի հյուսիսարեւելյան պատին կից, որի կողքերից միանում(աղ. II, 2): են չորս խողովակաշար եւ 24-րդ սենյակում 4-րդ սենյակի աբսիդի հարեւանությամբ, որին միանում են հինգ խողովակաշար[10]: Անտիոքում հայտնաբերվել է նաեւ Արտաշատի VI սենյակի ջրբաժանի նման խողովակաշարով մի կրաքար[11]: Այսինքն՝ ինչպես Անտիոքի գլանաձեւ անցքերով կրաքարերը, այնպես էլ Արտաշատինը ջրամատակարարման համակարգի մաս են կազմել:

Շարունակում են հանդիպել քառանկյուն խողովակներ, նեղ եզրերին ուղղանկյուն բացվածքներով եւ ջրահեռացման լայն ու հաստ խեցիով կիսախողովակներ: Վերջիններս բնորոշ են հիպոկաուստով հռոմեական տիպի բաղնիքներին[12]:

VI սենյակի հարավարեւմտյան մասում՝ աստիճանաձեւ լայնացող պատի անկյունում, բացվել է կրաքարե սալերով պատրաստված քառանկյուն հոր (լայն. 75 սմ, երկ. 90-113 սմ, խոր. 85 սմ), որը մի կողմով միանում է հյուսիս-արեւմուտք ուղղության վերոհիշյալ տաք ծխի անցման կամարաձեւ անցքին (բարձր. 67 սմ, լայն. 46 սմ): Վերջինիս մի կողմը շարված է կղմինդրներով, մյուսը՝ թրծած աղյուսներով (աղ. II, 2): Այն դեպի ներքեւ նեղանում է (բարձր. 75 սմ, լայն. 45 սմ): Հիպոկաուստի սկավառակաձեւ սյուներից ամենաշատը պահպանվել է յոթ շարք, մնացածները՝ 1-3: Քառանկյուն եւ սկավառակաձեւ աղյուսներն ավելի մեծ են ու չափերով տարբեր: Հատակը պատած է եղել խճանկարով: Տարբեր խորությունից եւ զանազան դիրքերով ի հայտ են եկել խճանկար հատակի բազմաթիվ բեկորներ եւ հատիկներ: Այն եղել IV սենյակի խճանկարի նման: Սենյակի հարավային պատը փձեւ կիսակլոր է, որով անջատվել է վառարանից: Սենյակի մակերեսը 12.6 քմ է (աղ. II, 2): Այն եղել է շոգեբաղնիս:

VI սենյակից հայտնաբերվել է մեծ քանակությամբ շինարարական խեցեղեն՝ թրծած աղյուսներ, ուղղանկյուն խողովակների մասեր, պատին ամրացնելու կոնաձեւ չորս ելուստներով աղյուսներ, ինչպես նաեւ ապակե բաժակների շուրթեր, կենտրոնում զույգ փորագիր շրջանով անտիկ կավե անոթի հատակ, միջնադարյան փոքր ծորակով ջնարակած անոթի բեկորներ եւ այլն:

V եւ VI սենյակները միացնող երկարավուն նեղ միջանցքի պատերը միջին դարերում վերականգնվել են կարմիր տուֆե զանգվածեղ քարերով: Հատակի հիպոկաուստի սյուները հանել են եւ ծածկել խոշոր սալերով:

VII սենյակի պեղումները նույնպես արդյունավետ եղան: Ստուգումները ցույց տվեցին, որ այստեղ առկա են երեք շերտի վերաբերող հատակներ: Վերին հատակից հայտնաբեր-

10 **Antioch on-the-Orontes,** I, The Excavations of 1932: Edited by Gearge W. Elderkin 1934, Princeton: Princeton University Press. London: Oxford University Press. The Hague: P. 10,11; Fig. 5,7, Antioch on-the-Orontes. III, p. 26, Fig. 29.

11 Antioch on-the-Orontes. II, p. 18, 19, Fig. 16, 17.

12 **Josef Durm**. նշվ. աշխ., նկ. 354, երկ. 55-56սմ, լայն. 18սմ, խոր. 10սմ:

Ամփոփման վիճակում գտնվող կամարակապ

Ամփոփման վիճակում գտնվող կամարակապ

Ամփոփման վիճակում գտնվող կամարակապ

Ամփոփման վիճակում գտնվող կամարակապ

Ամփոփման վիճակում գտնվող կամարակապ

Ամրոցամատույցի հատակագիծը

6-րդ դարի վերջերի և 7-րդ դարի սկզբի վիմագրերով

Ամրոցամատույցի դարձվածքները

5-րդ դարի սկզբի վիմագրերով

Ամրոցամատույցի վերին մասը

5-դարի 4-դարի սկզբամ կառուցված կոմպլեքս

վել են մեծ քանակությամբ խճանկարի հատիկներ եւ կարմիր սարդիոնով պատրաստված մատանու փոքրիկ ակ (12x10x 20 մմ): Օվալաձեւ հարթ մակերեսին պատկերված է հողի մակերեսը խորհրդանշող հորիզոնական գծի վրա, դեպի ձախ կանգնած Տիխե-Ֆորտունան (առջեւի մասը՝ վնասված), որը աջ ձեռքով բռնել է նավի ղեկը (պահպանվել է ղեկի ներքին կեսը), իսկ ձախով՝ առատության եղջյուրը: Նրա հետեւում կանգնած հաղթանակի թեւավոր աստվածուհի Նիկա-Վիկտորիան ձախ ձեռքով բռնած դափնեպսակը մեկնել է դեպի Տիխեի գլուխը, աջով՝ ուսին դրված արմավենու ճյուղը (նկ. 11): Պատկերը դինամիկ է, ունի հելլենիստական արվեստին բնորոշ մշակում: Հիանալի ընդգծված է Տիխեի աշտարակաձեւ թագը, նրա եւ Նիկայի հագուստի ուղղահայաց եւ թեք ծալքերը, առատության եղջյուրը, Նիկայի թեւերն ու ճյուղի նուրբ տերեւները, ուշ հելլենիստական շրջանին բնորոշ մազերի գեղեցիկ սանրվածքը ("Melonen frisur"-ի ձեւով), որի կոսը բարձր է՝ նման Արտաշատի Ք. ա. I դ. չորրորդ քառորդին պատկանող դամբարանից հայտնաբերված Կլեոպատրա Սելենեի արձանիկի սանրվածքին[13]:

Տիխեի պաշտամունքը լայնորեն տարածված էր հելլենիստական դարաշրջանում: Նա մի շարք քաղաքների հովանավորն[14] էր (Անտիոք, Ալեքսանդրիա եւ այլն): Անահիտը՝ իբրեւ Արտաշատ մայրաքաղաքի հովանավոր, համադրվել է Տիխեի հետ, որի արձանը Սելեւկյանների օրոք կանգնեցվել է Անտիոքի մոտ՝ բարձունքի վրա՝ Օրոնտես գետի ափին: Տիգրանի՝ Անտիոքը գրավելուց հետո դրամների դարձերեսին հաճախ դրոշմվում է նրա կերպարը՝ ժայռաբեկորի վրա բազմած, ձեռքին արմավենու ճյուղ, իսկ գլխին աշտարակաձեւ թագ[15]: Անահիտը նման թագով պատկերված է Արտաշատի քաղաքային դրամի դիմերեսին[16] (Ք. հ. 2-6 թթ.):

Նիկայի թագավորին դափնեպսակ մատուցելու մոտիվը նույնպես լայնորեն տարածված էր հելլենիստական արվեստում: Այն Պարթեւստանում եւ Հայաստանում ամենասիրված թեմաներից մեկն էր: Իսկ Նիկան Հայաստանում եւ իրանական աշխարհում կարող էր նույնացվել միայն Անահիտի հետ: Ուշագրավ է, որ Նիսայի կնիքներից մի քանիսի վրա պատկերված հեծյալ պարթեւական թագավորին Նիկան է դափնեպսակով պսակադրում կամ արմավենու ճյուղ մատուցում[17]: Սասանյան քանդակների ծիսական տեսարաններում իշխանության ու հաղթանակի խորհրդանշան դափնեպսակը արքային է հանձնում Անահիտ աստվածուհին[18]: Նիկան Հայաստանում պատկերվել է Արտաշատի քաղաքային դրա-

13 **Ж. Д. Хачатрян**, Новые памятники античного искусства из Арташата.- Вестник общественных наук АН Арм. СССР (ВОН). 1996, №1, с. 116-117, рис. 4-5. **Ժորես Խաչատրյան**, Քաղաքամայր Արտաշատը պատմահնագիտական հետազոտությունների լույսի ներքո, (ՊԲՀ), 2007, թ. 2, էջ 31, աղ. X3; **Žores D. Kachatrian**. Artaxata capitale dell' Armenia antica (II sec. A.C.- IV sec.D.C.).- Ai piedi dell' Ararat Artaxata E L'Armenia Ellenistico-Romana, a cura di Antonio Invernizzi, Torino, 1998, p. 143, Fig. 84a-b-c.

14 «Դիցաբանական բառարան» (կազմեցին Մ.Ն. Բոգվինենկ, Մ.Ա. Կոզան, Մ.Բ. Ռաբինովիչ, Բ. Ժ. Սելեցկի թարգմ.՝ Ս.Մ. Կրկյաշարյանը), Երեւան, 1985, էջ 237:

15 **Б. Н. Аракелян**. Очерки по истории искусства древней Армении (VI в. до н. э. - III в. н. э.). Ереван, 1976, Табл. LXXIV, LXXV; **Ժ. Դ. Խաչատրյան**, Անահիտ դիցուհու պաշտամունքն ու պատկերագրությունը Հայաստանում եւ նրա աղերսները հելլենիստական աշխարհի հետ, ՊԲՀ, 1985, №1, էջ 130, աղ. I 6:

16 Նույն տեղում, էջ 130, Աղ. I, 3; **Р. Е. Варданян**, К вопросу о датировке двух груп армянских монет эллинистической эпохи, ИФЖ, 1987, № 2, с. 201-207; **Ս. Ա. Մուշեղյան**, Վեր Հայաստանի դրամային շրջանառության պատմությունից (մ.թ.ա. IVդ. վերջերից մինչեւ մ.թ. III դարի սկիզբը), ՊԲՀ, 1970, № 3, էջ 92-93:

17 **Г.А Кошеленко**. Родина парфян. М., 1977, с. 139-140.

18 **H. Luschey**. Zur Datierung der Sasanidische Kapitalle, aus Bisitun und der Monuments von Tak-i-Bostan.- Arche-

մի դարձերեսին, դեպի ձախ քայլող հաղթանակի դիցուհին՝ աջ ձեռքին բռնած դափնեպսակը առաջ պարզած, ձախում՝ արմավենու ճյուղը՝ «Արփաշատ մայրաքաղաքի» հունարեն արձանագրությամբ:[19] Այն պատկերվել է նաեւ հայ թագավորների դրամների դարձերեսին եւ դափնեպսակով, եւ արմավենու ճյուղով [20], ինչպես նաեւ կնիքների եւ Սիսիանի արծաթե ոսկեջրած մեդալյոնի վրա[21]:

2008 թ. պեղվեց նաեւ IV սենյակի արեւելյան հատվածը, որտեղ բացվեց երկու սենյակ՝ VIII- եւ IX-ը (նկ. 2): VIII սենյակի (երկ. 6.85, լայն. 3.70) հարավային եւ արեւմտյան պատերը պահպանվել են մինչեւ երկրորդ հատակի մակարդակին: Առաջինը կրաքարե լավ հղկված սալերով է կառուցված: Հյուսիսային եւ արեւելյան պատերը պահպանվել են երկրորդ (վերին) հատակից 1.5 մ բարձրությամբ: Հարավարեւելյան պատին IX սենյակ տանող դռան բացվածքը պատած է սպիտակ խճանկարով: VIII սենյակի վերին հատակը չի պահպանվել: Հողի լիցքից հայտնաբերվեցին կավե եւ ապակե անոթների բեկորներ, երկաթյա գամեր, դանակի մասեր, հատակի խճանկարով բեկորներ եւ հատիկներ, օնիքսից պատրաստված թռչնի թեւերի երկու հատված, փեղուրների մանրամասն մշակումով (նկ. 13), սպիտակ մարմարե կանացի փոքրիկ ոտնաթաթ (երկ. 10.2սմ, մատների հատվածում լայն. 4սմ), որն ունի հելլենիստական արվեստին բնորոշ մշակում: Պահպանված են համաչափությունները, մանրամասն տրված են ոտքի երկարուկ գեղեցիկ մատները, եղունկները (նկ. 12):

Պահպանված երկրորդ հատակի հենասյուները սկավառակաձեւ եւ քառակուսի աղյուսներից են, կան նաեւ պահպանված կավե կլոր խողովակներ, որոնք կենտրոնում ներճկված են, տաք ծխի համար ունեն շրջանաձեւ կամ ձվածիր երեք անցք: Դրանք հատակին հենվում են խողովակի տրամագծի չափի բացվածքով քառակուսի աղյուսի վրա: Նույն ձեւով այն ավարտվում է վերին մասում: Սրանք տարբերվում են II սենյակի, Արփաշատի VIII բլրի, Վաղարշապատի ու Գառնիի բաղնիքների խողովակներից:

Ամենաուշագրավը VIII սենյակի հարավային կեսում ներճկված վիճակում պահպանված վերին հատակի խճանկարն է, որը թույլ է տալիս վերականգնել խճանկարի հորինվածքի ընդհանուր պատկերը: Նրա թեման, նախշերի վերակազմությունը, երկրաչափական եւ այլ տիպի զարդերը, իրենց բաղադրիչ մասերով հիշեցնում են գորգային հարուստ նախշերը (աղ. III, 4): Բազմագույն գեղեցիկ պատկերը, համաչափ դասավորված մանրամասներով շքեղ տպավորություն է թողնում: Սպիտակ, համեմատաբար խոշոր հատիկներով շարված եզրային հատվածին հաջորդում է լայն, ուղղանկյուն մուգ կապույտով արված շրջանակ՝ շեղանկյուն եւ ուղղանկյուն երկրաչափական զարդերով: Դրան հաջորդում է քառակուսի, ոճավորված պարանահյուսքով շրջանակի մեջ վերցված իրար հետ միահյուսված վեց շրջան, որոնց կենտրոնը գտնվում է մեծ շրջանի շառավիղի կենտրոնում: Բոլոր օղակներն ունեն իրենց երիզանախշերը: Վերջիններս, առանձնանալով օղակից եւ վերին մասում հյուս-

---

ologische Mitteilunge aus Iran. New Folge, Bd. I, B., 1966. S. 129-142, Taf. 51-54

19 **Р. Е. Варданян**. Ук. соч., с. 201-207, рис. 5-8.

20 **Խ. Ա. Մուշեղյան**, նշվ. աշխ., էջ 71-73, **Ռուբեն Վարդանյան**, Արփավազդ II-ի դիմապատկերի պատկերագրական մի փարրի մասին, «Հին Հայաստանի պատմության եւ մշակույթի հարցեր», Երեւան, 2001, էջ 66:

21 **А. Б. Манукян**, Глиптика древней Армении (VI до н. э.- III в н.э.).- Афтореферат дисертации на соискание ученой степени кандидата исторических наук. Ереван, 1992, с. 19; **Ժ. Դ. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 130, աղյուս. I 1:

վելով՝ վերածվում են ութանման հյուսված երեք զարդի: Երիզանախշի ներքեւում օղակներն ունեն երեք տեսակի, ժապավենաձեւ, ալիքաձեւ զարդաշարան, որը խորհրդանշում է ծովի հանգիստ վիճակը, եւ ոլորուն ծայրով նախշեր, որը ալեկոծվող ծով է նշանակում: Հետաքրքիր են քառակուսու անկյուններում պատկերված երկսայրի սակրերը իրենց կոթառով: Երկբերան սակրի մասին մի հիշատակություն ունի Մովսես Խորենացին [22]՝ կապված պաշարված Տիգրանակերտի (359 թ.)պարիսպների հիմքերը քանդելու հետ: Խճանկարի հորինվածքը աչքի է ընկնում բազմազանությամբ, կուռ կառուցվածքով, զարդերի հարստությամբ:

IX սենյակի (երկ. 6.1 մ, երկ. աբսիդոյով 7.25 մ. լայն. 4.2 մ) վերին հատակը չի պահպանվել: Գտնվել են վերին հատակի տարբեր մեծության մասեր՝ հաճախ բազմագույն կամ սպիտակ խճանկարով: Բազմագույն խճանկարները հիշեցնում են հելլենիստական հարթակի հյուսիսային կողմի լիցքից 2003 թ. հայտնաբերված բազմագույն խճանկարի բեկորը[23]: Ներքին հատակի վրայից ի հայտ եկավ մ.թ. II-III դդ. տեղական եւ ներմուծված խեցեղեն բեկորներ: Վերջիններս հիմնականում օծանելիքի տարբեր տեսակի անոթների են պատկանում:

IX սենյակը VIII հետ հաղորդակցվող դռան բացվածքի սպիտակ խճանկարով պատած շեմի կրաքարե սալի տակ ծխի համար անցք է թողնված: Նման մի անցք էլ կա նույն պատի հյուսիսայի մասում: Կրակարանի կամարաձեւ շարված երրորդ անցքն էլ առկա է հյուսիսային պատի կենտրոնական ներքնամասում, որը III սենյակի կողմից բացվել էր դեռեւս 2006 թ.: Այսինքն՝ VIII եւ IX սենյակները, բացի III սենյակի կրակարանից, իրար հետ անցքեր ունեն նաեւ միջնապատի վրա: Հնարավոր է, նախապես այս երկու սենյակները մեկ կրակարանով են տաքացվել կամ երկու կրակարանն էլ օգտագործվել են միաժամանակ՝ ջերմությունը մի մակարդակի վրա պահելու համար: Ի տարբերություն VIII սենյակի՝ IX սենյակն ունի աբսիդա (խոր. 1.2 մ, լայն. 2 մ), որը կանգուն է: Այն հետագայում վերանորոգման ժամանակ ուղղանկյուն է դարձվել եւ վրան ավազան (լոգան) է սարքվել (երկ. 2մ, լայն. 1.4 մ): Վերջինիս պատերի մեջ պահպանվել են սենյակը տաքացնելու համար տեղադրված ուղղանկյուն խողովակները (նեղ ճակատներին), կոնաձեւ 3 եւ 4 ելուստներով ուղղանկյուն աղյուսները (հարավային պատին): Աբսիդայի հիպոկաուստի սյուները ուղղանկյուն, սկավառակաձեւ աղյուսներից են եւ կրաքարերից (3 հատ) ինչպիսիք ունեինք VIII բլրի բաղնիքում եւ հայտնի է Փառախտում[24]: Դրանք վերեւում եւ ներքեւում հարթ են, ուղղանկյուն: Վերին հատակի բարձրությունը ներքեւից մեկ մետր է: IX սենյակի սյուները հիմնականում VIII սենյակում եղած վերոհիշյալ կավե խողովակներից են եւ ուղղանկյուն եւ սկավառակաձեւ աղյուսներից: Հյուսիսային պատի կամարաձեւ անցքի կողքերին շարված են ցածր պատեր, տաք ջրի կաթսայի համար: Արեւելյան պատի վրա կա լայն ուղղանկյուն խորշ, որը ծածկված է եղել որմնանկարներով: Այստեղ, հավանաբար տեղադրվել է բարձրաքանդակ (խոր. 40 սմ, լայն. 2 մ): Սրա եւ աբսիդայի միջեւ կիսակլոր լայն որմնախորշ (լայն. 2.5 մ, խոր. 75 սմ) է պատրաստված, որի հատակին պահպանվել է արձանի շրջանաձեւ պատվանդանը (տրամ. 35 սմ): Որմնախորշը ծածկված է բաց կարմրավուն ներկով (նկ. 15):

---

22 **Մովսէս Խորենացի**, III, 28:

23 **Zhores D. Khachatryan**. Archaeological research in Artaxata. Preliminary report 2003-2004, Parthica, Pisa. Roma 2005, № 7, Fig. 5.

24 **А. А. Ивановский**, По Закавказью. Материалы по археологии Кавказа, вып. VI, М., 1911, с. 38, рис. 2с.

IX սենյակից հայտնաբերվել է երկու բրոնզե դրամ, մեկը՝ շատ քայքայված վիճակում, երկրորդը՝ լավ պահպանված: Վերջինը Տրայանոսի դրամն է, Գալատիայում, 99/100 թ. թողարկված. AE, 25.42 գ, 32.5 մմ, 1 ժ 26*:

Գտնվել են նաեւ տարբեր ձեւերի բրոնզե թիթեղներ, թիակներ նման, սկավառակաձեւ այլ տեսակի կախիկներ, կարմրավուն ապակե անոթի շրթի բեկորներ եւ հատակ, քարե տափակ երկու ուլունք, դեղնավուն եւ մոխրագույն մարմարե պատվանդանի եւ այլ մանրամասներ, օնիքսից պատրաստված թռչնի թեւերի երկու հաստ բեկոր, որոնք VIII սենյակից հայտնաբերված օնիքսի թեւերի բեկորների հետ պատկանել են նույն արձանին:

Ուշադրության արժանի է այս սենյակի խճանկարը, որը նույնպես բազմագույն է: Այն թեւ մեզ է հասել բեկորային վիճակում, սակայն ունեցել է շատ հարուստ հորինվածք: Եզրային մասը պատրաստված է եղել ֆիլզիտի սպիտակ, համեմատաբար խոշոր հատիկներով: Պատկերներն արված են կանաչ, կարմիր, սպիտակ, սեւ, դեղնավուն սմալտայով: Այստեղ ըստ պատկերի մասերի, օգտագործվել են տարբեր ձեւերի ու չափերի հատիկներ, հաճախ այնքան մանր, որ կարելի է շարել միայն փոքրիկ ունելիով: Ի տարբերություն VIII սենյակի խճանկարի՝ այստեղ գտնվել է մարդու դեմքի մի հատված՝ աջ աչքով, ճակատի մի մասով եւ մազերով, քթով ու բերանով: Սեւով գրված լատիներեն արձանագրության երեք տառ (VER), մեանդրի տարբեր ձեւեր, ծաղիկներ եւ այլ զարդեր: Ի դեպ Արտաշատում մեանդրն իր կիրառությունն է գտել նաեւ բնակարանների ինտերիերների որմնանկարներում (VIII բլուր): VIII եւ IX սենյակների խճանկարները հասարակական բաղնիքի սկզբնական շրջանի հորինվածքներից են եւ կարող են թվագրվել II դ. վերջով եւ III դ. սկզբով: Դրանք Հայաստանում հայտնաբերված երկրորդ խճանկարն են, բայց մակերեսով շատ ավելի մեծ եւ ավելի հին, քան Գառնիի խճանկարը: Ըստ որում երկուսն էլ պատկանում են անտիոքյան դպրոցին: Հայտնի է, որ կային խճա նկար պատրաստող շրջիկ վարպետներ: V սենյակի շեմի շեղանկյունաձեւ զարդերով խճանկարը նույնպես պատկանում է բաղնիքի առաջին շերտին IIIդ. սկզբին, իսկ մյուս խճանկարները, որոնք նույն ոճի են, վերաբերում են IVդ. սկզբին:

2008 թ. ավարտվել են նաեւ III սենյակի պեղումները: Հեռացվել են այս հատվածի XIII-XVI դդ. կառույցների մնացորդները, որից հետ այն ստացել է իր նախնական տեսքը: Պարզվեց որ III սենյակի միջոցով տաքացվել են I, II, VIII, IX սենյակները, որտեղ դրանց կամարաձեւ բացվածքով կրակարաններն են: Ավարտվել են նաեւ փոքրիկ խորանով X սենյակի աշխատանքները: Այն եղել է աղոթատեղի եւ ունեցել է զոհասեղան, որը հայտնաբերվել է III սենյակի նոր բացված հարավարեւելյան անկյունում: Հասարակական բաղնիքներն ունեցել են նաեւ իրենց պաշտամունքային սենյակները:

Հելլենիստական հարթակի արեւելյան պատի դիմաց բացվել են մեծ սրահի հարավային, արեւմտյան եւ հյուսիսային պատերը, ներսում երկու շարքով շարված յոթ քառանկյուն մույթեր (1x1.2 մ), ութերորդը դեռեւս չի մաքրվել: Դրանք բոլոր կողմերից ծածկված են բազմագույն որմնանկարներով:

Ուշագրավ են IX սենյակի հարավարեւելյան պատի անկյան դրսի կողմից հայտնաբերված I-IIդդ. խեցեղենի՝ սկուտեղների, ափսեի, թասերի բեկորները, եւ հատկապես կապտականաչավուն (ակվամարինի) գույնի, թափանցիկ ապակուց, կաղապարի մեջ սեղմելու

* Դրամը որոշել է Ռուբեն Վարդանյանը:

եղանակով պատրաստված կիսագնդաձեւ թասի (փիալա) մասերը, (նկ.20), որոնք գալիս են ամբողջի ձեւը (տրամ. 14 սմ, բաձր. 6,5 սմ): Այն դրսից հարդարված է ուղղահայաց ռելիեֆ զարդերով ("Rippenschale"), որոնք հատակից դեպի վեր աստիճանաբար բարձրանում եւ լայնանում են: Այդպիսի թասերի բեկորներ հայտնաբերվել են նաեւ Արտաշատի VII-VIII բլուրներից ու քաղաքի դամբանադաշտից[26], Գառնի ամրոցից եւ մի ամբողջական թաս էլ Քեբանից, Փաղնիքի մ.թ.I-IIդդ. դամբարանից (տրամ. 14 սմ, բարձր. 6.5-7 մ, ուղղահայաց թմբերի հեռավորությունն իրարից 1.7-3 սմ է)[27]: Այդպիսի թասեր գտնվել են նաեւ Վրաստանից[28]: Այս թասերն օգտագործվում էին իբրեւ ըմպանակ: Խճանկար տեխնիկայով նման գեղեցիկ թասեր պատրաստվել են դեռեւս մ. թ. ա. I դ. վերջերին եւ մ. թ. I դ. սկզբին[29], ինչպես Միջերկրականի արեւելյան ափերի ապակեգործության կենտրոններում, այնպես էլ արեւմտյան: Դրանք աչքի էին ընկնում իրենց խորությամբ, պատրաստման մեծ վարպետությամբ եւ գեղարվեստական ձեւավորմամբ: Բնականաբար բարդ ու աշխատատար այս եղանակով պատրաստված թասերը թանկ էին, հետեւաբար քիչ էին տարածված: Մ. թ. II դ երկրորդ կեսին սկսվում է այդպիսի միագույն թասերի արտադրությունը, որը դառնում է անտիկ ապակու ամենատարածված տեսակներից մեկը: Կիսագնդաձեւ կապտականաչավուն թասեր հայտնաբերվել են նաեւ հյուսիսմերձսեւծովյան շրջաններում եւ այլուր[30]: Այդ թասերի վաղ օրինակները, ինչպես VIII բլրից հայտնաբերված օրինակը[31], ներսից հատակին ունեն ակոսավոր զույգ գոտի: Արտաշատի նորահայտ թասը պատկանում է I դ. երկրորդ կես - II դարին: Նման թասեր կարող էին Հայաստան բերվել հռոմեական զինվորների միջոցով, որովհետեւ դրանք տարածված էին Արեւմուտքում եւ շատ էին օգտագործվում կենցաղում: Այս ենթադրության օգտին է խոսում սույն փաստը, որ առայժմ այդպիսիք հայտնաբերվել են Արտաշատում Գառնիում եւ Փաղնիքում, որտեղ մ. թ. I դ. երկրորդ կեսին եւ II դ. գտնվելիս են եղել հռոմեական կայազորներ: Հնարավոր է նաեւ, որ դրանց մի մասը Հայաստան է ներմուծվել առեւտրական ճանապարհով:

Գտնվել են բազալտե կոնաձեւ երկանքի վերին քար (նկ. 16), ուշ անտիկ շրջանի խեցեղենի բեկորներ (նկ. 17)՝ եռատերեւ ընդգծված պսակով, ներճկված կանթով սափորներ, ապակե սրվակների եւ թասերի բեկորներ, կաղապարի մեջ պատրաստված բազմանկյուն զարդերով (վաղ միջնադարյան), IV-V դդ. կովկիթներ, մեծ ու փոքր կճուճներ, լայն շուրթերի վրա փորագիր զարդերով տաշտեր եւ այլն, որոնք իրենց զուգահեռներն ունեն VIII բլրի խեցեղեն արտադրանքում: Հայտնաբերված շինարարական խեցեղենի մեջ մեծ թիվ են կազմում կղմինդրներն ու թրծած աղյուսները, խողովակներն ու հատ խեցիով ջրահեռացման կիսախողովակները (նկ.18):

Ուշագրավ են X-XVII դդ. պատկանող նյութերը, կարմիր եւ բաց դարչնագույն կավից

---

26 **Ժ. Դ. Խաչատրյան**, Արտաշատ II, Անտիկ դամբարանադաշտեր (1971-1977թթ. պեղումները), Երեւան, 1981, էջ 156-159, նկ. 52, 8-12:

27 **R. P. Harper**, Pagnik Oreni Excavations, 1969, ser. I, № 2, p. 95, pl. 65.2.

28 **Д. А. Хахутаишвили**, Уплисцихе. I. Тбилиси, 1964, т. XLIX, 1,2; Նույնի, Уплисцихе. II. Тбилиси, 1970, с. 112, т. XXIII, 6 (конец Iв. До н. э.-I в. н. э.).

29 **Нина Кунина**. Античное стекло в собрании Эрмитажа.Санкт-Петербург. 1997, с. 268, № 93а-б.

30 Անդ. 257, 259, № 30; **Н. П. Сорокина**. Стекло из раскопок Пантикапея 1949-1959гг. "Материалы и исследования по археологии СССР", Пантикапей, № 103, М., 1962, с. 215, 216, ил. 2, 4, 5, 3, 3, 4.

31 Արտաշատ II, էջ 157:

պատրաստված, անջնարակ փորագիր զարդերով եւ ջնարակած բազմատեսակ հարուստ խեցեղենը, որոնք վկայում են համալիրի երկարատեւ գոյության մասին: Թեւեւ պատերի մի մասի մեջ նկատելի են այդ շրջանին վերբերող, սեւ եւ կարմիր փուֆ քարերով կատարված վերանորոգման հետքեր:

Թերմերը (հուն. տաք բաղնիք)՝ ընտանեկան եւ հասարակական բաղնիքները, ամենասիրված վայրերից էին: Հունական քաղաքներում, սակայն, դրանց թիվը չնչին էր: Մինչդեռ հռոմեացիների մոտ, սկսած ուշ հանրապետական, եւ հատկապես կայսերական շրջանում, դրանք մեծ մասսայականություն էին վայելում[32]: Մ. թ. ա. I դ. եթե դրանց թիվը ընդամենը 170 էր, ապա մ. թ. IV դ. 900-1000 էր հասել: Լողանալը դարձել էր ծես: Այն որոշակի տեղ էր զբաղեցնում օրվա ապրելակարգում (ռեժիմ)[33]: Մարդիկ օրվա առաջին կեսին զբաղվում էին գործնական հարցերով, երկրորդ կեսն անցկացնում էին հասարակական բաղնիքներում[34]:

Սպորտի եւ առողջության (հիգիենայի) խնդիրների լուծման համար բաղնիքներում անհրաժեշտ էին համապատասխան բաժանմունքներ՝ palestra (դահլիճ կամ հրապարակ սպորտով զբաղվելու համար), apodyterium (հանդերձարան), caldarium (տաք բաղնիք), tepidarium (միջին տաքության, գոլ բաղնիք), frigidarium (սառը բաղնիք), natatio (ջրավազան)[35]: Բաղնիքում, ըստ վճարի չափի, սպասարկողներ կային, որոնք լողացնում էին հատուկ էսենցիաներով (բնահյութերով), մերսում էին, օծանելիքներ քսում, հրամցնում էին տարբեր ուտելիքներ, խմիչքներ եւ այլն[36]:

Հայտնաբերված անտիկ բաղնիքներում միշտ չէ, որ պահպանվել են ընդունված ընդհանուր կաղապարները, դա հատկապես վերաբերում է ըստ նշանակության սենյակների դասավորությանը[37]: Հաճախ նորամուծություններ էին կատարվում՝ պահպանելով հիմնական սկզբունքները: Այս ամենից ելնելով կարեւորվում էր բաղնիքների դեկորատիվ ձեւավորումը: Բացի հատակները կամ առաստաղները խճանկարով հարդարելուց, զարդարում էին նաեւ արձաններով, առանձին կանգնեցված սյուներով, որոնք, ինչպես Սենեկան է նշում[38], ոչինչ չէին պահում, այլ ձեւական էին, կանգնեցվում էին սոսկ իբրեւ զարդարանք: Հռոմում, օրինակ, 1506 թ. Տիտոսի հասարակական բաղնիքի ավերակներում հայտնաբերվել է այնպիսի նշանավոր արձանախումբ, ինչպիսին Ագեսանդրոսի, Պոլիդորոսի եւ Աֆինոդորոսի (մ. թ. ա. II), «Լաոկոոնը որդիների հետ» պատկերաքանդակն է: Նրա հորինվածքը եւ գլխավոր քանդակի ռելիեֆի բնույթն ու դիրքը ընդօրինակված են Պերգամոնի զոհասեղանի ծոփորից (ֆրիզ), Ալկիոնեի հսկայի քանդակից (մ. թ. ա. 180 թ.): Լաոկոոնը եւ Բելվեդերյան Ապոլոնի արձանը երկար ժամանակ համարվում էին հունական արվեստի գլուխգործոցները[39]: Ըստ V եւ IX սենյակների պատերին եղած խորշերի (խորանների) եւ պատվանդանների, ինչ-

32 **Г. С. Кнабе.** Древный Рим-история и повседневность.М., 1986, с.42.

33 **М. Е. Сергеенко**.Жизн древнего Рима.Очерки быта.М.-Л., 1964, с.145; **Г. С. Кнабе.** Ук.соч., с.47; **И. А. Бартенев, В. Н. Батажква**.Очерки истории архитектурных стилей.М., 1983, с.46.

34 **Անդ :**

35 **"Словарь античности"**, М., 1984, с.572.

36 **Անդ**, էջ 70-71:

37 **L. Charitonidis**, **R. Ginouves**. Bain romain de Zeuegolatio. Bulletin de correspondance héllenique, V. LXXIX, 1955, I, Paris, p. 110, note №4; **Г. А. Тирацян**. Ук.соч., с.273.

38 **Сенека.** Нравственные письма к Луцилию, М.1977, LXXXVI, 8 11.

39 "История искусства зарубежных стран". М., 1980, с. 153-154, рис. 309.

պես նաեւ VIII- IX սենյակներում հայտնաբերված Վիկտորիայի օնիքսից պատրաստված թեւերի՝ բեկորները (4) վկայում են, որ Արտաշատի բաղնիքը նույնպես հարդարված է եղել քանդակներով ու բարձրաքանդակներով:

Իսկ ինչպիսի՞ ծածկ են ունեցել եւ ինչպես են լուսավորվել համալիրի բացված սենյակները: Հատակագծի համաձայն՝ յուրաքանչյուր սենյակ պետք է նշված խնդիրների իր լուծումն ունենար: Պահպանված պատերին լուսամուտներ չկան: Պեղումներից հայտնաբերվել են զանազան չափերի ու ձեւերի կղմինդրների ու կալիպտերների մասեր, տարբեր հաստության հարթ ապակու եւ սլյուդայի բեկորներ, որոնցից մեկը ոսկեգույնը սմալտայով է պատած (նկ. 12):

Առաջին, մեծ սենյակը երկու արտաքին պատ ունի՝ հյուսիսայինը եւ արեւելյանը՝ աբսիդով: Այսինքն՝ այս պատերին լուսամուտ կարող էր լինել եւ դեպի հյուսիս կամ արեւելք թեքության կղմինդրե հարթ ծածկ ունենալ, ինչպես Գառնիի բաղնիքը[40]:

IV եւ VI- VII սենյակներից հայտնաբերվել են մեծ քանակությամբ երկաթե տձեւ ձուլվածքներ, որոնք թեժ կրակից միայն կարող էին այդպես հալվել: Ամենայն հավանականությամբ, դրանք եղել են գմբեթի կամ թաղակապ ծածկի ձողեր ապակիները պահելու համար, որով արեւի ճառագայթները կարող էին թափանցել լողասենյակ: Ոսկեզօծ բեկորը, հավանաբար, նման ծածկի է պատկանել, որտեղ պատկերված է եղել արեւ: Բաղնիքների թաղակապ ապակեպատ առաստաղի մասին վկայում է Սենեկան՝ Լուցիլիոսին գրած նամակում[41]: Բաղնիքների ծածկի մեջ երկաթյա ձողեր օգտագործելու մասին է վկայում նաեւ Պալադիոսը[42]:

III, V, VIII-X սենյակների ծածկի մասին առայժմ դժվար է խոսել, քանի դեռ պարզված չէ՝ դրանք հարակից սենյակներ ունե՞ն, թե՞ ոչ:

Բաղնիքի համալիրի տարածքի հողի լիցքից հայտնաբերվել են տաճարին վերաբերող մշակված քարեր, տարբեր չափերի զանազան քանդակներով բեկորներ: Ուշագրավ է համալիրի հարավային հատվածում հայտնաբերված անտաբլեմենտի մասը, հավանաբար քիվի (ատամները չեն պահպանվել), որոնք հարդարված են ծառ հիշեցնող վեր բարձրացող երեք ոլորուն ճյուղերով (նկ.18): Ձախ կողմում նկատելի է եռանկյունի պատվանդան, թե դրա վերեւում ի՞նչ է եղել, դժվար է ասել: Հարավարեւելյան անկյունի հողի լիցքից գտնվել է տաճարի անտի քար (երկ. 93 սմ), որը ցույց է տալիս տաճարի պատի լայնությունը: Նրա երկու ճակատը հարդարված է կիսաշրջանաձեւ եւ վահանաձեւ ռելիեֆ զարդերով: Տաճարի շինաքարերից շատերն ունեն ուղղանկյուն եւ քառակուսի փոսիկներ, որոնք վկայում են քարերն իրար հետ ուղղահայաց ամրացնելու մասին:

Հելլենիստական հարթակի հյուսիսարեւելյան հատվածում՝ քառաշար պատի դիմաց, միջնադարյան պատի հիմքում բացվեց առվակոսներով 1-1.5 մ բարձրության 64-72 սմ տրամագծով 14 գլան (սյուն): Երկար ժամանակ մնալով խոնավ կավահողի մեջ՝ մասամբ ատամները մաշվել, հարթվել են (նկ. 13): Նման սյան բեկորներ հայտնաբերվել են նաեւ նախորդ

40 **Ж. Д. Хачатрян**, **А. В. Тоникян**.Ук.соч., с.147, рис.8, 9.

41 **Сенека**.Письма к Луцилию, 86.- ''Архитектура античного мира''.Составители: В.П.Зубов и Ф.А.Петровский.М., 1940, с.211.

42 **Паладий.** О сельском хозяйсте.I 40-41., с.213.

տարիներին հելլենիստական հարթակի հյուսիսային կողմի լիցքից եւ բաղնիքից[43]: Արտաշատից հայտնաբերված կավե արձանիկի վրա (I-II դդ.)՝ ատամնավոր սյուներով խորանի մեջ, գահավորակին նստած, կողքին կանգնած երեխային կերակրող Անահիտ աստվածուհին է: Նույնը նկատելի է բրոնզե աստիճանաձեւ պատվանդանի ատտիկյան խարսխով սյան վրա, որն ավարտվում է կորնթոսյան խոյակին հաղթական դիրքով կանգնած արծվի արձանիկով: Սյան ներքին կեսը հարթ է, իսկ վերինը՝ ատամնավոր (մ. թ. I դ.): Այսինքն՝ վերոհիշյալ նորահայտ սյուները հաստատում են մեր այն կարծիքը, որ Արտաշատում եղել են նման սյուներով կառույցներ, եւ կավե ու բրոնզե արձանիկներ կերտող վարպետները վերարտադրել են դրանց ճարտարապետական ձեւերը: Հայտնաբերվել են նաեւ արխիտրավի մի բեկոր, կրաքարե ռելիեֆ քանդակներով հարդարանքի գեղեցիկ բեկորներ, ատտիկյան մեծ տրամագծի խարսխի հատված, կորնթոսյան խոյակի գեղեցիկ բեկոր (նկ. 19), որը տարբերվում է 2006 թ. հայտնաբերված բեկորներից[44]:

Այսպիսով, կասկածից վեր է, որ այստեղ է մեր ենթադրած Արեգ-Միհր-Ապոլոն-Հերմես-Տիրի տաճարը[45]:

Մովսես Խորենացին ասում է, որ Արտաշեսը «... գտեալ յԱսիայ պղնձաձոյլ ոսկեզօծ պատկերս զԱրտեմիդեայ եւ զՀերակլեայ եւ զԱպոլոնի՝ տայ բերել յաշխարհս մեր, զի կանգնեսցեն յԱրմաւիր: Զոր առյալ քրմապետացն, որ էին յազգէն Վահունեաց՝ զԱպոլոնին եւ զԱրտեմիդեայն կանգնեցին յԱրմաւիր»[46], որտեղ Վաղարշակը Արեգակին եւ Լուսնին նվիրված մեհյան էր կառուցել. «... մեհեան շինեալ յԱրմաւիր՝ անդրիս հաստատէ արեգական եւ լուսնի եւ իւրոց նախնեացն»[47]: Այստեղից իրավացիորեն եզրակացրել են, որ Ապոլոնը Հայաստանում եւս նույնացվել է արեւի հետ: Այնուհետեւ Երվանդը մայրաքաղաքն Արմավիրից Երվանդաշատ է տեղափոխում, իսկ կուռքերի համար առանձին քաղաք է կառուցում՝ Բագարանը., «... նման իւրոյ քաղաքին շինեաց քաղաք փոքր ի վերայ գետոյն Ախուրենայ, եւ անուանեաց Բագարան, այս ինքն թէ ի նմա զբագնաց յօրինեալ է զկազմութիւն. եւ փոխեաց անդր զամենայն զկուռսն որ յԱրմաւիր: Եւ մեհեանս շինեալ՝ զեղբայր իւր զԵրուազ քրմապետ կացուցանէր»[48]: Արտաշատի հիմնադրման ժամանակ Արտաշեսը Բագարանից Արտաշատ է տեղափոխում կուռքերը. «Երթեալ Արտաշեսի ի տեղին, ուր խառնին Երասխ եւ Մեծամօր, եւ հաճեալ ընդ բլուրն՝ շինէ քաղաք յիւր անուն անուանեալ Արտաշատ: Ձեռնտու լինի նմա եւ Երասխ փայտիւք մարյեաց. վասն որոյ անաշխատ եւ երագ շինեալ՝ կանգնէ ի նմա մեհեան, եւ փոխէ ի նա ի Բագարանէ զպատկերն Արտեմիդեայ եւ զամենայն կուռս հայրենիս. բայց զԱպաղոնի պատկերն արտաքոյ քաղաքին կանգնէ հուպ ի ճանապարհն»[49]:

---

43 **Ժ. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 220, նկ. 12 : Նույնի, Նորահայտ մանրամենտալ շինություններ Արտաշատից..., էջ 42 :

44 Նույն տեղում, էջ 39 :

45 **Ժ. Խաչատրյան, Ա. Կանեցյան, Ի. Կարապետյան, Ի. Թրահնա**, Արտաշատի 2003-2004թթ. պեղումների արդյունքները, «Հին Հայաստանի մշակույթ», XIII, Երեւան, 2005 էջ 17, **Ժ. Խաչատրյան**, Մոնումենտալ կառույցի մնացորդներ..., էջ 229-231 :

46 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց» (Աշխատ. Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան), Տփղիս, 1913, II, ԺԲ:

47 Անդ, II, Ը:

48 Անդ, II, Խ:

49 Անդ, II, ԽԹ:

Այսինքն՝ իբրեւ առեւտրի աստված, (քանի որ Ապոլոնը հունական աշխարհում վաղուց էր նույնացվել Հերմեսի հետ)՝ դրանով իսկ շեշտելով Արտաշատ մայրաքաղաքի առեւտրական ուղղվածությունը:

Գ. Տիրացյանը գտնում է, որ Տիրը նախ համադրվել է Ապոլոնի, եւ ապա Հերմեսը՝ Տիրի հետ: Եվ Արտաշատը Արմավիրից հետո Հայաստանում պատգամախոսարան ունեցող երկրորդ կենտրոնն է[50]:

Ագաթանգեղոսը[51] վկայում է, որ քրիստոնեության տարածման ժամանակ թագավորն իր զորքով Վաղարշապատից գալիս է Արտաշատ՝ ավերելու Անահիտ դիցուհու բագինը եւ այն ամենը, որ «Երազամոյն» կոչված տեղում էր գտնվում: Նրանք ճանապարհին եղան քրմական գիտության դպիր, Որմզդի գրչի Դիվան կոչված, ճարտարության ուսման, երազացոյց, երազահան պաշտամունքի Տիր աստծու մեհյանում եւ ավերեցին: Ագաթանգեղոսի հունարեն տեքստում ավելացված է նաեւ, որ Ապոլոնի զոհարանը (մեհյանը) կոչվում է Տրիտիս[52]: Այսինքն՝ Տիրը համադրվել է Ապոլոնի հետ, եւ Արտաշատի մոտ գտնվող Ապոլոնի սրբատեղին դարձել է նաեւ Տիրի սրբատեղին: Տիրի մասին դա առաջին եւ միակ վկայությունն է[53]: Տիրը հայկական պանթեոն է մտել, ըստ երեւույթին, Արշակունիների օրոք, քանի որ նրա ավելի վաղ գոյության մասին ոչ մի տեղեկություն չունենք: Նա Ապոլոնի հետ համադրվել է իբրեւ արվեստի, ճարտասանության աստված, իսկ Հերմեսի հետ՝ որպես գուշակություն անող[54]:

Ագաթանգեղոսի վերոհիշյալ վկայությունից ելնելով՝ ենթադրվում է, որ Տիրի տաճարը՝ Երազամոյն վայրը, պետք է լինի անպայման Արաքսի ձախ ափին: Ս. Երեմյանը Երազամոյն վայրում գտնվող Տիր-Ապոլոնի տաճարը նախ տեղադրում է Վաղարշապատի արեւելյան դարբասից՝ Արեգ դռնից դուրս եկող, Արտաշատ տանող ճանապարհին՝ այժմյան Զվարթնոցի տեղում[55], իսկ հետո՝ Դվինում: Անուղղակի տվյալները ցույց են տալիս, որ Տրդատ I, հետեւելով իր տոհմի նախորդների ավանդույթներին, իր գահակալությունը սրբազործելու համար Արտաշատ մայրաքաղաքի հյուսիսային արվարձաններում հիմնում է սրբավայր, որը պետք է կոչվեր «Դուին-Ասաակ»: Ագաթանգեղոսի տեղեկություններից երեւում է, որ Ասաակ արվարձանում հիմնված տաճարը նվիրված էր Տիր աստծուն եւ «իբրեւ ուսման ճարտասանության» ու «երազահան պաշտաման Տրի դից» կոչվում էր «Երազամոյն»: Սրա ուխտի օրը Տրդատ I-ը սահմանում է հայկական ամսի 17-րդ օրը, որը այնուհետեւ կոչվում է «Ասաակ»: Այս տաճարի շենքը պետք է լինի Դվինի պեղումների ժամանակ

---

50 **Геворг Тирацян**. Вопросы преемственности официального культа в античной Армении, ВОН АН Арм ССР, 1985, № 10, с. 64.

51 «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1909, « 778:

52 Agathangelus und der Akten Gredors von Armenien.- Neu herausgegeben von Paul de Lagarde. Gottingen. 1887, s. 65. 22; Ագաթանգեղոս Պատմություն հայոց, Աշխարհաբար թարգմ. ներածականով ու ծանոթագր. Ա. Տեր-Ղեւոնդյան, Երեւան, 1977, էջ 14, ծան. 35:

53 Այս հարցին մանրամասն անդրադարձել ենք մեր Իրանա-հայկական դիցաբանական աղերսների հարցի շուրջը հոդվածում.- ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» (Այսուհետեւ՝ ԼՀԳ), 1981, № 2, էջ 58-61, հոդվածում :

54 **Н. Эмин**. Очерки религий и верований языческих армян. М., 1864, с. 26; **Ղ. Ալիշան**, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 288-295:

55 **С. Т. Еремян**. Развитие города и городской жизни в древней Армении.- ВДИ, 1953, № 3, с. 22.

հայտնաբերված I դարում կառուցված եռանավ բազիլիկան, որը քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո դարձել է քրիստոնեական տաճար[56]: Այս տեսակետն ունեցավ իր հետեւորդները[57]: Դվինի բազիլիկան մ. թ. I դարին չի պատկանում, այլ V դ. 80-ական թվականներին:

Մի շարք գիտնականներ 1950-ական թվականներին անդրադարձել էին Դվինի հիմնադրման ժամանակին վերաբերող հարցերին եւ Մովսես Խորենացու վկայությանը: Աս. Շահնազարյանն իր մենագրության մեջ հատուկ քննության առարկա է դարձրել այն բոլոր աղբյուրները, որոնք հիշատակել են Դվինը՝ մինչեւ մարզպանական Հայաստանի մայրաքաղաք դառնալը: Հերքելով այդ աղբյուրների հավաստի լինելը՝ նա իրավացիորեն շեշտում է, որ Ագաթանգեղոսի, Կորյունի, Ղազար Փարպեցու եւ Եղիշեի մոտ Դվինն ընդհանրապես չի հիշատակվում[58]: Ա. Տեր- Ղեւոնդյանը[59] շեշտում է, որ Տիր աստծու Մեհյանը Արտաշատի մոտ էր: Հ. Մանանդյանը նշում է, որ «...Տիր աստծու, այսինքն՝ հունական Ապոլոնի արձանը գտնվում էր Արտաշատից ոչ հեռու՝ մեծ ճանապարհի մոտ[60]: Այս տեսակետին մենք հանգամանորեն անդրադարձել ենք մեր աշխատություններում, ցույց ենք տվել, որ քաղաքից դուրս չի նշանակում քաղաքից հեռու: Իբրեւ հավանական վայր նշել ենք Արաքսի աջ ափին գտնվող մեծ բլուրը, որի կողքով է անցնում Տափերական կամրջով դեպի հարավ, արեւելք եւ արեւմուտք տանող գլխավոր առեւտրական ճանապարհը[61]:

2003-2004 թթ. Արտաշատի հարթավայրային հյուսիսարեւմտյան մասում՝ Արաքսի ձախ ափին, 70-80 հեռավորությանբ, բացվեց միաշար կրաքարերով, ռուստիկում մշակումով, ծիծեռնակապոչ կապերով ամրացված հենապատի հյուսիսային եւ արեւելյան պատերը: Հայտնաբերվեցին տորաձեւ եւ ատտիկյան խարիսխներ, հարթ ու մատնեքավոր սյուների բեկորներ, քիվի եռանկյունաձեւ բավականին մեծ քար՝ ատամնավոր, ձվաձեւ բարձրաքանդակներով: Ենթադրվեց, որ այստեղ մ.թ.ա. IIդ. կրաքարե շքեղ հենապատով կառուցված բարձր հարթակի վրա վեր է խոյացել Արտաշատ մայրաքաղաքի մոնումենտալ հասարակական կարեւոր համալիրներից մեկը: Հարց է ծագում՝ դա արդյոք Մովսես Խորենացու հիշատակած՝ քաղաքից դուրս, ճանապարհին կառուցված Արեգ-Միհր-Ապոլոն-Հերմես-Տիրի տաճարը չէ[62]: Նիկողայոս Ադոնցը Կեղծ Պլուտարքոսից մի վկայություն է բերում Հայաստանում Արաքսի մոտերքում գտնվող Դիորփոս կոչված մի լեռան մասին. «Դիորփոս

56 «Հայ ժողովրդի պատմություն» (ՀԺՊ), հ. 1, Երեւան, 1971, էջ 761, 826, հ. 2, Երեւան,1984, էջ 83, ծան. 12:

57 **Գ. Քոչարյան**, Դվինը անտիկ դարաշրջանում, ՊԲՀ, 1979, № 2, էջ 272-277; **Գ. Գ. Քոչարյան**, Դվին III, Դվինը անտիկ դարաշրջանում, Երեւան, 1991, էջ 5-8; **Г. А. Тирацян**. О некоторых особенностях основания города Двин. Третий всесоюзный симпозиум по проблемам эллинистической культуры на Востоке. Тезисы докладов, Ереван, 1988, с. 85-86; Նույնի,- Культура древней Армении, VI в. До н. э.- III в. н. э., Ереван, 1988, с. 157-158; **Ա. Քալանթարյան**, Դարձյալ Դվինի հիմնադրման մասին, ԼՀԳ, 1988, № 1, էջ 63-70:

58 **Ас. Шахназарян**. Двин, историко-географический очерк. Ереван, 1940, с. 7-25.

59 **Ագաթանգեղոս**, ծանոթ. 35:

60 **Հ. Մանանդյան**, Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երեւան, 1946, էջ 16-17:

61 **Ժորես Խաչատրյան**, Հելլենիստական քաղաքաշինության որոշ ավանդույթների, Երազամույն վայրի եւ Դվին քաղաքի հիմնադրման մասին, ԼՀԳ, 1987, № 2 էջ 46-57: Նույնի, Հայաստանի անտիկ դարաշրջանի քաղաքներն ու քաղաքաշինությունն ըստ Մովսես Խորենացու «Հայոց պատմության», ՊԲՀ, 1998, № 1-2, էջ 180-188. նույնի, Հին Արտաշատի տեղադրության հարցի շուրջ, Հին Հայաստանի պատմության եւ մշակույթի հարցեր, Երեւան, 2001, էջ 42-48:

62 **Ա. Խաչատրյան, Ա. Կանեցյան, Ի. Կարապետյան, Ի. Թրահնա**, նշվ. աշխ., էջ 168-172, նկ. էջ 173-176. **Ժորես Խաչատրյան**, Մոնումենտալ կառույցի մնացորդներ..., էջ 218-239, նկ.1-16:

Տաճարի թեկի պեղումները և պատկերը

Դեմքանոց մի վիմագիր

Կապտավուն օնիքսից ոսկեղեն մի բաճկոն

Լոգանքատեղի մի հատակաքար

լեռը կոչվել է մի ոմն Դիորփոսի անունով, որը ծնվել է քարից եւ սերմը սպացել Միթրայից, եւ որովհետեւ ուզեցել էր չափվել Արեսի հետ, Դիորփոսը սպանվեց վերջինի կողմից, ապա աստվածների կողմից փոխակերպվեց լեռան»[63]:

Մովսես Խորենացու վկայությունը, հավանաբար, վերաբերում է Արտաշես Ի-ի ժամանակ կառուցված քաղաքին: Հունահռոմեական աղբյուրները եւ վաղ միջնադարյան մեր պատմիչները քաղաքից դուրս կառուցված տաճարի մասին չեն հիշատակում: Բացի այդ՝ հենապատերի հիմքերը 6-7 մ ցածր են այսօրվա ռելիեֆի մակարդակից, եւ Արաքսը կարող էր այդ ժամանակ շրջանցել համալիրը արեւելյան կողմից[64]:

Կորբուլոնի արշավանքի ժամանակ՝ մ. թ. 59 թ., համալիրն ավերվել է: Գրեթե նույն տարածքում Տրդատ Ի-ի օրոք (66 թ. հետո) կառուցվել է նոր հարթակ, շինարարական նոր տեխնիկայով, սեւ մարմարի սալ, եւ զանգվածեղ քարերով կառուցված ցոկոլի վրա բարձրացել է ռուստիկում եւ հարթ մշակումով կրաքարե միաշար պատ: Բացվել է երկրորդ հարթակի հյուսիսային պատի մի հատվածը 10.6 մ երկարությամբ եւ արեւելյանը՝ 36.3 մ, որից հետո այն թեքվում է դեպի արեւմուտք[65] (12.2 մ): Այս պատի հետեւում ի տարբերություն հելլենիստականի, երկայնքով 1.2 մ լայնությամբ սեւ մարմարի եւ բազալտի անտաշ զանգվածեղ քարերով կառուցված է հզոր պատ՝ կրաքարե շարվածքի վրա հարթակի ճնշումը փոքրացնելու համար: Հարթակի արեւելյան կողմում՝ գրեթե կենտրոնում բացվել է 4.8 մ լայնությամբ վեց աստիճան, որը տանում է դեպի սրբազան հարթակ՝ հյուսիսարեւելյան հատվածի սրահի որմնանկարներով պատած յոթ ուղղանկյուն (1-1.2 մ) մույթերը, պեղումներով հայտնաբերված տարբեր բարձրության մատնեքավոր 15 սյուները, կորնթոսյան եւ հոնիական խոյակների բեկորները, ատտիկյան ու տորաձեւ խարիսխները, քանդակազարդ սալը եւ բեկորները, առյուծի գլխի ծորակով կաթսան, սկուտեղի հատակի բաց ֆոնի վրա կարմիրով արված ութթեւանի վարդյակը, արծվի կրաքարե կարմիր ներկած աչքերով գլուխը խոսում են պաշտամունքային կառույցի, տաճարի եւ հարթակին կից շինությունների նշանակության մասին[66]: Կասկածից վեր է, որ հայտնաբերված տաճարը Արեգ-Միհր-Ապոլոն-Հերմես-Տիրինն է: Դրանով իսկ, ի վերջո լուծվում է Երազամույն վայրի, Տիրի տաճարի, Ագաթանգեղոսի հունարեն խմբագրության մեջ նշված Արտաշատում գտնվող Ապոլոնի պատգամարանի տեղադրության հարցը:

Հունարեն Ագաթանգեղոսի մեջ նշված է, որ Արտաշատում կործանեցին Արտեմիսի տաճարը, այնուհետեւ Ապոլոնի պատգամարանը[67]: Դա նշանակում է, որ Արտաշատի Ապոլոնի սրբավայրում, ինչպես նաեւ Արմավիրում, Անիում, Բագարանում[68] գուշակություններ էին արվում եւ երազներ էին մեկնաբանվում: Վերոհիշյալ կենտրոններում եւ, հավանաբար

63 **Նիկողայոս Ադոնց,** Հայաստանի պատմություն: Մի հին պաշտամունքի հետքերը Հայաստանում, Երեւան, 1972, էջ 371:

64 **Ժ. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 224-225, 231, նկ. 5,6:

65 **Ժ. Խաչատրյան**,Նորահայտ մոնումենտալ շինություններ Արտաշատից, էջ 31-32:

66 Նույն տեղում, էջ 31-43, **Ժ. Խաչատրյան**, Մոնումենտալ կառույցի մնացորդներ..., էջ 222-231, նկ. 8-12; **Ժորես Խաչատրյան**, Քաղաքամայր Արտաշատը պատմահնագիտական հետազոտությունների..., էջ 9-11, աղ. VI 4, VII 2-5, VIII 1-3, XII 3:

67 Նույն տեղում, էջ 10; **Մովսէս Խորենացի**, II ԶԶ; **Ագաթանգեղոս**, էջ 175:

68 **Ժ. Խաչատրյան**, Ուրարտա-հայկական պաշտամունքային առնչություններ, «Բանբեր Երեւանի համալսարանի», 1998, № 3, էջ 74:

մյուս տաճարներում գուշակությունների ընթացակարգը նույնությամբ պահպանվել է մինչեւ քրիստոնեության ընդունումը: Տրդատ I-ի օրոք կանգնեցվել է Տիրի արձանը ինչպես Սիրիայում, Հիերոպոլսի ամենանշանավոր տաճարում, որտեղ, ըստ Լուկիանոսի[69], կային մի շարք ասպվածների արձաններ:

Մերժելով գուշակության մյուս ձեւերը՝ քրիստոնեությունն ընդունեց միայն երազների կանխագուշակությունը: Այդ են վկայում Տրդատ III-ի կերպարանափոխության առնչությամբ Ագաթանգեղոսի հաղորդած տեղեկությունները[70]: Շապուհ II-ի կողմից 368 թ., երբ ավերվեց Արտաշատը, քանդվեց նաեւ Խոր Վիրապի (VI բլուր) եկեղեցին եւ այնտեղ կառուցվեց ապրուշան: Վերջինս, ըստ Փավստոսի[71], ավերում է Մուշեղ Մամիկոնյանը: Ենթադրվում էր, որ դրանից հետո կյանքը շարունակվում է VI բլրի վրա եւ բլուրներից հարավ ու արեւելք ընկած հարթավայրում: Վերականգնվում են VI բլրի պարիսպները՝ որպես առանձին ամրոց: Այդ են վկայում նաեւ 1999 թ. VI բլրի վրա կատարված պեղումների արդյունքները[72]:

Մայրաքաղաքը եւ Մայր աթոռը 480-ական թվականներին թեեւ տեղափոխվեցին Դվին, սակայն Խոր Վիրապը դարձավ Արարատյան թեմի կենտրոնը, եւ իբրեւ նշանավոր սրբավայր եւ ուխտատեղի շարունակում է իր գործունեությունը:

Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու հետ կապված Արեգ-Միհր-Ապոլոն-Հերմես-Տիրի տաճարի ավերման մասին Ագաթանգեղոսի վկայությունից բացի, դրա հետագա գոյության մասին ոչ մի գրավոր տեղեկություն չունենք: Ինչպես տեսանք, այդպիսիք վերաբերում են միայն Անահիտի տաճարին: Ապոլոն-Տիրի տաճարի տեղում եկեղեցի չի կառուցվել, եւ այն կորցրել է իր պաշտամունքային նշանակությունը: Նույնիսկ խաչքար չի հայտնաբերվել[73]:

Քաղաքի տարածական կառուցվածքում, ընդհանրապես, երբ այս կամ այն պատճառով տեղի է ունենում լրիվ կամ մասնակի փոփոխություն, կամ այն կորցնում է իր գործառնական անհրաժեշտությունը, փոխարինվում եւ ծառայեցվում է այլ նպատակի: Ինչպես, օրինակ, պարթեւական Դուրա-Եւրոպոս քաղաքի հրապարակը (ագորա), երբ դադարեց կատարել ժողովատեղի լինելու իր նախկին հիմնական գործառույթը, վերածվեց շուկայի[74]: Պեղումները ցույց են տալիս, սակայն, որ VI բլրի՝ Ապոլոն-Տիրի տաճարի տարածքում, Խոր Վիրապի նման կյանքը, թեեւ ընդհատումներով (ավերածություններով), նույնպես շարունակվել է մինչեւ XVI-XVII դդ.՝ 1679 թ. հունիսի 4-ի երկրաշարժը, որից հետո այն չի վերականգնվել: Հնարավոր է, որ տաճարի տեղում կառուցվել է հասարակական շենք, որը մեզ չի հասել:

Արտաշատը հարյուրամյակներ շարունակ եղել է միջազգային առեւտրի խոշոր կենտ-

---

69 **Лукиан**, О сириской богине. 34, 35, 38.- Собрание сочинений. Т. II, М.-Л.,1935 (перевод под редакцией с коментариами Б. Л. Богаевского).

70 **Ագաթանգեղոս**, « 214, 216, 794, 811, 813:

71 «Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Երեւան, 1987, V, 1:

72 **Ժորես Խաչատրյան**, Արտաշատը հայոց դարձի նախօրեին եւ հետո, «Էջմիածին», 2002, Ժ, էջ 60:

73 **Ժորես Խաչատրյան**, Նորահայտ մոնումենտալ շինություններ..., էջ 33 :

74 **Генадий Кошеленко, Арам Акобян**, Градостротельство Армении и Градостротельство Парфии.- "Второй международный симпозиум по Армянскому искусству". Сб. докладов, Том I, Ереван, 1978, с. 251; The Excavations at Dura- Eropos. Preliminary Report of 9th season of work. P. I, The Agora and Bazaar. New Haven, 1934.

րոն: Ուսպի պատահական չէ, որ Հուստինիանոս I-ի (527-565 թթ). կոդեքսում՝ արտացոլված (408-409 թթ.) կայսերական էդիկտում (Cod-justin-IV,63,4), Բյուզանդական կայսրության եւ Պարսկաստանի միջեւ համաձայնագիր է կնքվել միջազգային ապրանքափոխանակություն կատարելու մասին. առեւտուրը լինելու էր երեք քաղաքներում, որտեղ մաքսատներ կային Բյուզանդիայում՝ Կալինիկումում, Մծբինում, որն այդ ժամանակ Պարսկաստանի կազմում էր, եւ Մեծ Հայքի մայրաքաղաք Արտաշատում[75]: Դվինը, Vդ. վերջին մարզպանական կենտրոն դառնալով, անմիջապես չէր կարող ստանձնել առեւտրական կենտրոնի դերը, այլապես Արտաշատի փոխարեն կնշվեր Դվինը: Արտաշատը, հավանական է ավանդաբար, միառժամանակ շարունակել է առեւտրական կենտրոնի դերը: Միջազգային առեւտրական ճանապարհն անցնում էր Տատերական կամրջով: Արեգ-Միհր-Ապոլոն-Հերմես-Տիրի տաճարը գտնվում էր Արաքսի ափին՝ կամրջի հարեւանությամբ: Չէ՞ որ Հերմեսը կանգնեցվեց այդ ճանապարհին՝ որպես առեւտրի աստված: Ամենայն հավանականությամբ, այս տարածքն է եղել քաղաքի առեւտրական կենտրոնը: Այստեղ, բացի մյուս գտածոներից, հայտնաբերվել են նաեւ նուրբ կավե գնդիկներ, որոնք օգտագործվում էին զանազան գործարքներ կնքելու համար: Տաճարները ունեին իրենց արհեստանոցները եւ ակտիվորեն մասնակցում էին միջազգային առեւտրին: Հասարակական բաղնիքը վերածվել է քարավանատան: Ժամանակ առ ժամանակ այն ենթարկվել է մասնակի ավերածության, սակայն կրկին վերանորոգվել է: Այդ են վկայում աստիճանների եւ բաղնիքի պատերի սեւ ու կարմիր տուֆի զանգվածեղ քարերով վերանորոգումները, պատերի (5 սմ) սվաղի կրկնակի հին եւ նոր շերտերը, համալիրից հայտնաբերված հարթ ապակու, բաժակների եւ օծանելիքի տարբեր տեսակի սրվակների, մինչեւ XVII դ. անջնարակ եւ ջնարակած, բաց դարչնագույն ու կարմիր կավից պատրաստված, տարբեր ձեւերի, չափերի ու նշանակության տեղական եւ ներմուծված անոթների բեկորներ եւ այլն :

Հյուսիսարեւելյան հատվածում բացվող մույթերով սրահը, հնարավոր է վերածվել է շուկայի: Արաբական աղբյուրներն Արտաշատն անվանում են «ներկարարների» քաղաք -AL-Qirmiz[76]: Օտար աղբյուրները սովորաբար գրում էին այն, ինչն իրենց համար նորություն էր կամ տվյալ երկրին բնորոշ էր: Կարծում ենք՝ բացի որդան կարմիրից, նաեւ այլ գույնի ներկերով ներկող արհեստավորներ կային, որոնք արտահանում էին ինչպես իրենց ներկած արտադրանքը, այնպես էլ որդան կարմիրը: Անկասկած կային նաեւ այլ արհեստավորներ: Երբ Դվինը ճանաչվեց առեւտրական նոր կենտրոն, Արտաշատի այս հատվածը վերածվեց քարավանային միջանկյալ կայանի Վաղարշապատի եւ Դվինի ճանապարհին: Այսպիսով՝ Ապոլոն-Տիրի տաճարի եւ կից համալիրների պեղումների արդյունքները բացահայտում են Արտաշատի, ինչու չէ, նաեւ Հայաստանի պատմությանն ու մշակույթին վերաբերող անհայտ նոր էջեր՝ քաղաքաշինության, շինարարական տեխնիկայի, կոմունալ տնտեսության, քաղաքային մշակույթի, կյանքի ու կենցաղի մակարդակի մասին:

Այսինքն՝ Հայաստանում ուշ անտիկ շրջանում ծանոթ էին նաեւ հունահռոմեական

---

75 **Я. А. Манандян**. О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (Vв. до н. эры-XVв. н. эры). Ереван, 1954, с. 108. ՀԺՊ, I, էջ 809-810, ծան. 52, 53:

76 **Баладзори**. Книга завоевания стран, пер. Жузе. Баку, 1927, с. 10; **С. Т. Еремян**. Торговые пути Закавказья в эпоху Сасанидов. По Tabula Peutingeriana.- ВДИ, 1939, № 1, с. 83.

աշխարհում լայն տարածում ստացած կոմունալ տեխնիկայի նվաճումներից մեկին՝ բաղնիքների շինարարական սկզբունքներին: Այդ են վկայում Գառնիում, Վաղարշապատում, Սատաղում[77], Փառախտում[78] եւ հատկապես Արտաշատում հայտնաբերված մասնավոր եւ հասարակական բաղնիքները: Արտաշատում բացի պեղված երեք բաղնիքներից, հայտնի են եւս երեքը, կարծում ենք, որ Արեւմտյան Հայաստանի քաղաքներում եւ ամրոցներում նույնպես պետք է լինեին մասնավոր եւ հասարակական բաղնիքներ:

Կոմունալ նորամուծությունները նպաստեցին վաղ միջնադարյան ինչպես քաղաքաշինության, ճարտարապետության, այնպես էլ խճանկարային արվեստի հետագա զարգացմանը: Վաղ միջնադարյան բաղնիքներ են բացվել Դվինում[79], Զվարթնոցում[80], իսկ Ամբերդում[81], Անիում [82], Լոռի Բերդում[83], Տաթեւում[84] XI-XII դդ.: Խճանկար է եղել, ինչպես վերը նշվեց, Խոր Վիրապի VII դ. եկեղեցում, որը տեսել է արաբ մատենագիր Ալ-Մուկադասին[85] (X դ., Աստվածամայրը մանուկ Հիսուսը գրկին), իսկ Դվինում՝ Կաթողիկե եկեղեցու հատակին (երկ. 160 սմ, լայն. 65 սմ): Վերջինը պատկանում է V դ. վերջին եւ բաղկացած է հինգ գույնի քարերից՝ մուգ սրճագույն, կարմիր, կանաչ, դեղին եւ սպիտակ: Եկեղեցու արեւելյան աբսիդի քարերի վրա գտնվել է նաեւ Տիրամոր խճանկար պատկերը (VII դ.), որը, սակայն խճանկար հատակի հետ կապ չունի: Ըստ Կ. Ղաֆադարյանի՝ V դ. խճանկարներն ունեն երկրաչափական ձեւեր, իսկ VII դարինը՝ կոմպոզիցիոն նկար[86]:

---

77 **T. B. Mitford**. Biliotti's Excavations at Satala.- Anatolian Studies, 1974, vol. XXIV, p. 221-244. Ֆր. եւ Եւզ. Կյումոն Եղբարց.- Պոնտական ուսումնասիրութիւնք, մասն բ, Յակոբոս Տաշեան. Վիեննա, 1919, էջ359-369: **Ն. Ղակոբյան**, Մեծ ու Փոքր Հայքերի սահմանագլխի հռոմեական ամրությունների համակարգը, ՊԲՀ, 1986, № 4, էջ 152:

78 **А. А. Ивановский**. По Закавказью, "Материалы по археологии Кавказа", вып. VI. М., 1911, с. 38, рис. 22.

79 **Կ. Ղաֆադարյան**, Դվին քաղաքը եւ նրա պեղումները,էջ 136-138, նկ. 107:

80 **Թ. Թորամանյան**, Նյութեր հայկական ճարտարապետության, հ. II, Երեւան, 1948, էջ 96-107:

81 **И. А. Орбели**. Баня и скоромах XII века.- Памятники эпохи Руставели. Сборник государственного эрмитажа. Л., 1938, с. 159-170; **И. М. Токарский**. Архитектура древней Армении, Ереван. 1946, с. 163.

82 **Н. Я. Марр**. Ани.- Л., 1934, с. 71, Табл. XXXII; **И. А. Орбели**. Краткий путеводитель по городищу Ани (Анийская серия, № 4). СПб, 1920, с. 14.

83 **Կ. Ղաֆադարյան**, նշվ. աշխ., էջ 136, ծան. 1.

84 **А. Л. Якобсон**. Из истории средневековой архитектуры в Крыму. Советская Археология. 1946, VIII, с. 275-278, рис. 14; Նույնի Средневековый Херсонес (XII-XIV вв.).- Материалы и исследования по археологии СССР, № 17, М.-Л., 1950, с. 82 .

85 **Ал- Мукаддаси**.- Сборник материалов по описанию местностей и племен Кавказа. Выпуск XXX-VIII, Тифлис, 1908, с.16.

86 **Կ. Ղաֆադարյան**, նշվ. աշխ., էջ 97-98, նկ. 105. նույնի, Դվին քաղաքը եւ նրա պեղումները, II, Երեւան, 1982, էջ 16, նվ. 7 (V-VIդդ.): **B. N. Arakelian**, Armenian mosaic of the early middle ages. Atti del Primo Simposio International di Arte Armenia- 1975. Venezia. S. Lazzaro. 1978, P. 2, fig. 3 (IV-V դդ.):